ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

---

Ν 256-Ա 06 մայիսի 2026 թ.

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԱՈՒՐԱ ՍՈՒՎԱՐՅԱՆԻՆ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՌԱԻՍԱ ԵՆՈՔՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին կետի և 172-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լաուրա Սուվարյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լաուրա Սուվարյանին տրամադրել հղիության և ծննդաբերության արձակուրդ՝ 2026 թվականի մայիսի 5-ից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 17-ը ներառյալ:

2" Լաուրա Սուվարյանի հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի

մարզի Վաղաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության օտար լեզվի ուսուցչուհի Ռախսա Ենոքյանին (առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2026 թվականի մայիսի 5-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

06.05.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք.Գավառ